ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

—

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԱԿԱՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1937

31 JAN 2018

Հ. Խ. Ս. Հ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 19 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 19

ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՒՐՍ

Կազմեց՝ Թ. ԴՐԱՄԲՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1937

Պատ. խմբագիր՝ Մ. ՉԱՌԱՖՅԱՆ

Սրբագրիչ՝ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. ՍԱՀԱԴՅԱՆ
ՀՍՍՀ
11-28752

Գլավլիտ Կ—4511 հրատ. № 9 պատվ. № 11 տիրաժ 500

Հանձնված է արտադրության 10 հունվարի 1937 թ.
Ստորագրված է տպելու 10 փետրվարի 1937 թ

Ուսուցիչների վորակավորման ինստիտուտի տպարան,
Յերևան, Մարքսի փողոց 17

ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Եվոլյուցիոն տեսությունը կենսաբանության ավարտական մասն է։ Դա բաժանված է ութ առաջադրությունների, վորոնք պիտի մշակվեն ինքնուրույն կերպով։

Դասընթացին կցված յերկու կոնտրոլ աշխատանքները կազմված են այնպիսի հարցերից, վորոնք ընդգրկում են մշակված առաջադրություններ և չորս կոնսուլտացիաներ։

Այս դասընթացի մշակման դժվարությունը բացատրվում է նրանով, վոր մեր ստանդարտ դասագիրքը լիովին չի համապատասխանում Լուսժողկոմատի տված ծրագրին, ուստի և ստիպված յեղանք նշանակել մի քանի կոնսուլտացիաներ այն հարցերի և առաջադրությունների շուրջը, վորոնց մասին հեռակայողը նյութ չի ունենա ձեռքի տակ, կամ յեղածն անբավարար կլինի։

Ինքնաստուգման հարցացուցակների հարցերը թեև թվով քիչ, բայց վորակով բարձր են. դա հետևանք է այն բանի, վոր դասընթացը կառուցված է վաղորոք մշակված՝ մարդու անատոմիայի ու ֆիզիոլոգիայի և կենսաբանության նյութի վրա։

Եվոլյուցիոն տեսության դասընթացում Դարվինի ուսմունքը և գենետիկան գրավում են կենտրոնական տեղը, ուստի և դրանց վրա յե կենտրոնացվում ամենամեծ ուշադրությունը։ Մարդու ծագման և դարվինիզմի վերաբերյալ ցանկալի յե կազմակերպել, վորտեղ այդ հնարավոր է, յերկու եքսկուրսիա։

Կոնսուլտացիաները կտան հեռակայողին անհրաժեշտ բացատրություններ այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են յեվգենիկան, նեոդարվինիզմը, նեոլամարկիզմը և այլն, վորոնք ընդհանրապես քիչ են շոշափված դասագրքում։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

№ № ըստ կարգի	Ինքնուրույն մշակվող առաջադրությունների թեմայով	Ինքնուրույն մշակման ժամերի քանակը	Կոնսուլտացիաների ժամերը	Կոնտրոլ առաջադրությունների կատարման ժամերը	Դրենական և ուսումնական սեխեռներ
1.	Ներածություն։ Գաղափար էվոլյուցիայի մասին	2	—	—	—
2.	Էվոլյուցիոն ուսմունքի հիմունքները. էվոլյուցիայի պարզաբանման մեթոդները	4	—	—	—
3.	Փոխոխականության և ժառանգականության ուսմունքը	4	1	—	—
4.	Էվոլյուցիոն գաղափարների զարգացումը մինչև Դարվինը	2	—	—	—
5.	Դարվինը և նրա ուսմունքը . . .	6	2	—	—
6.	Էվոլյուցիոն ուսմունքի զարգացումը Դարվինից հետո	2	2	2	—
7.	Մարդու ծագումը	3	—	—	—
8.	Կյանքի ծագումը յերկրի վրա . . .	2	2	2	20
	Ընդամենը . . .	25	7	4	20
	Բոլորը միասին . . .	56 ժամ			

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Թեմա.—գաղափար էվոլյուցիայի մասին։ աշխարհի ծագումը յեվ յերկրի պատմությունը (2 ժամ)

Նպատակադրումը.—Այս առաջադրության միջոցով հեռակայողը հատառատ գծերով ծանոթանում է տիեզերքի կառուցվածքի և ծագման հետ, վերհիշելով առաջին հերթին այն, ինչ նա մշակել է աշխարհագրության և կենդանաբանության դասընթացներն անցնելիս։

Մշակման պլանը.—1. գաղափար էվոլյուցիայի մասին։ Էվոլյուցիոն տեսությունը վորպես մատերիալիստական աշխարհայացքի բնագիտական բազա։ Էվոլյուցիոն տեսությունը վորպես բնության նկատմամբ յեղած վիտալիստական և նպատակաբանական հայացքների հակակշիռ։ Էվոլյուցիոն տեսության նշանակությունը հակակրոնական պրոպագանդում։

2. Իդեալիզմը և մեխանիզմը բուրժուական բիոլոգիայում։ Գիտության ծաղկումը ԽՍՀՄ-ում՝ հիմնված սոցիալիզմի կառուցման պրակտիկայի վրա։

3. Նյութը և շարժումը վորպես նյութի գոյության ընդհանուր ձև։ Ժամանակակից օրգանական աշխարհը վորպես էվոլյուցիոն պրոցեսի մի ետապ։

4. Տիեզերքի զարգացման մասին յեղած պատկերացումների զարգացումը՝ սկսած հին ժամանակներից և վերջացրած մեր օրերով։ Տիեզերքի կառուցվածքի և ծագման մասին յեղած գիտական տվյալների պայքարը կրոնի դեմ։

5. Յերկիրը վորպես մոլորակ։ Յերկրագնդի ներքին կառուցվածքը ժամանակակից գեոլոգիայի (յերկրաբանության) տվյալներով։ Յերկրաբանական քրոնոլոգիա (ժամանակաբանություն)։ Յերկրի վրայի կյանքի պայմանների փոփոխման համառոտ տեսությունն ըստ երանների և պերիոդների (դարաշրջանների)։

6. Բուսական և կենդանական ձևերի էվոլյուցիան։ Մարդու հանդես գալը։

Գրականություն.—Բելյայեվ Մ. Ն. «Էվոլյուցիոն ուսմունքի հիմունքները», դասագիրք միջնակարգ դպրոցների համար, ուսման 9-րդ տարի, ուսմանկհրատ., 1934 թ. էջ 3—8։

Լրացուցիչ գրականություն.—1. Յուզմեր—«Կենդանաբանություն» գլուխ 1-ն. § 1 և գլ. 12, §§ 98—100, էջ 301—310։

2. Պատյոմկին Մ. Պ. և Մալինկո Վ. Վ. «Մինեբալոգիա և գեոլոգիա», դասագիրք միջնակարգ դպրոցի համար, 3-րդ բաժնի 1-ին և 2-րդ գլուխները։ Ինքնաստուգման հարցեր.—1. Ինչպես պիտի բացատրել «էվոլյուցիա» բառը օրգանական աշխարհի նկատմամբ։

2. Ինչով և իդեալիզմն ելյականապես տարբերվում մատերիալիզմից օրգանական աշխարհի ծագման հարցի նկատմամբ։

3. Ինչով բացատրել այն փաստը, որ բուրժուական գիտնականները կառչում են իդեալիստական և մեխանիստական հայացքներին։

4. Ի՞նչ ուղղությամբ և զարգանում բիոլոգիան մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում։

5. Ինչու սխալ և շարժման բոլոր ձևերը մեխանիստական շարժումով բացատրելը։

6. Արդի գիտությունն ինչպես և բացատրում տիեզերքի կառուցվածքն ու ծագումը։

7. Ինչպես և ընթացել կենդանական և բուսական աշխարհի էվոլյուցիան։

Ցուցմունքներ մշակման վերաբերյալ.—Վորովհետև մեր Հեռամանախնիկումի հեռակայողները չեն մշակել մինեբալոգիայի և գեոլոգիայի դասընթացը, ուստի այս առաջադրության հարցաթերթիկում մենք շատ քիչ ենք կանգ առնում երկրի գեոլոգիական կառուցվածքի վրա և ուշադրությունը բևեռում ենք օրգանական էվոլյուցիայի խնդիրներին։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Թեմա.—Էվոլյուցիոն ուսմունքի հիմունքները (4 ժամ)

Նպատակադրումը.—Տվյալ առաջադրության միջոցով հեռակայողն ամփոփում է կենդանաբանության դասընթացում անցած նյութը և, կապելով այն բնագիտության այլ ճյուղերի հետ, համոզվում է էվոլյուցիոն ուսմունքի ճշմարտության մեջ։

Այս առաջադրությունը նվիրված է էվոլյուցիայի պարզաբանման խնդիրներին։

Մշակման պլանը.—1. Պալեոնտոլոգիան որպես էվոլյուցիայի ուսումնասիրման մեթոդ։ Կենդանական ձևերի կազմակերպման պրիմիտիվությունը երկրաբանական հեռավոր ժամանակաշրջաններում և նրանց աստիճանական բարդացումը։ Ժամանակակից ձիու նախորդների պալեոնտոլոգիական ձևերի շարքը։ Անցողիկ բրածո ձևեր։

2. Համեմատական-անատոմիական մեթոդ։ Հոմոլոգ և անալոգ օրգաններ և դրանց տարբեր նշանակությունն էվոլյուցիայի ապացուցման խնդրում։ Համեմատական անատոմիան և օրգանիզմների կառուցվածքի միասնական պլանի խնդիրը։ Ռուդիմենտար օրգանները և նրանց նշանակությունը։ Օրգանիզմների մեջ յեղած ծննդաբանական կապի հաստատումը։

3. Էվոլյուցիայի ապացուցման սաղմնաբանական մեթոդը։ Զողնաշարավորների սաղմերի համեմատությունը։ Զվի զարգացման սկզբնական ստադիաների նմանությունը։ Սաղմային զարգացման սկզբնական ստադիաների նմանությունը։ Մյուլլեր-Հեկկելի բիոգենետիկ օրենքը։ Նրա կիրառման սահմանները։

4. Օրգանիզմների տարածման աշխարհագրական տվյալները։ Կենսաաշխարհագրական շրջաններ։ Նրանց ֆաունայի բնույթը։ Կենդանիների աշխարհագրական տարածման էվոլյուցիոն պարզաբանումը։ Ովկիանոսային և ցամաքային կղզիների կենդանիները։ Ֆաունայի և ֆլորայի ժամանակակից բաշխումը որպես հետևանք երկրի դեմքի երկրաբանական փոփոխման և օրգանիզմների էվոլյուցիայի։

Գրականություն.—Բելյայեվ Մ. Ն. «Էվոլյուցիոն ուսմունքի հիմունքները» էջ 49—69 (էվոլյուցիայի ապացույցները)։

Ինքնաստուգման հարցեր. 1. Ի՞նչ որինակներով կարող ենք հաստատել կենդանիների օրգանիզմի բարդացման աստիճանական ընթացքը, յերբ մենք ոգտվենք պալեոնտոլոգիական տվյալներով։

2. Պալեոնտոլոգիական տվյալներից բերեք անցողիկ ձևերի որինակներ։

3. Ինչով կարելի յե բացատրել, որ հեռավոր տարբեր խմբերին պատկանող կենդանիներն ունեն անալոգ օրգաններ։ Վոր օրգանների շարքն եք դուք դասում միջատի տրախեյները և սարդի թոքապարկը, սարդի տրախեային թոքապարկը և գորտի թոքերը, ճպուռների և թռչունների թևերը։

4. Ինչու էվոլյուցիոն ուղիների պարզաբանման տեսակետից հոմոլոգ և անալոգ օրգաններն ունեն վոչ միատեսակ նշանակություն։

5. Ինչպես բացատրել սաղմնային աչքերի առաջանալը պրոտեուսի մոտ, գրենլանդական կետի սաղմի սաղմնային ատամների և հորթի սաղմի վերին կտրիչների առկայությունը։

6. Վոր օրգաններն են կոչվում ռուդիմենտային և ինչի մասին են նրանք վկայում։ Բույսերի վոր օրգանները հաճախ սաղմնային բնույթ ունեն։

7. Բոլոր վողնաշարավորների ձևերն իրենց զարգացման ընթացքում ինչ ոստոյիներ են անցնում և ինչ է դա ապացուցում։

8. Բիոգենետիկ վոր շեղումները սխալ պատկերացում են տալիս կենդանական ձևերի ազգակցության մասին և ինչով են բացատրվում այդ շեղումները Մյուլլեր-Հեկկելյան բիոգենետիկ որենքով։

9. Ինչով բացատրել Հյուս. Ամերիկայի և Ասիայի ֆաունայի նմանությունը և դրա տարբերությունը Հար. Ամերիկայի ֆաունայից։

10. Ի՞նչպես եք բացատրում Գալապագոսյան կղզիների ֆաունայի ծագումը։

11. Ինչով եք բացատրում Ավստրալիայի ֆաունայի յուրահատկությունը։

12. Ի՞նչպես եք բացատրում Աֆրիկայի և Մադագասկար կղզու կենդանիների տարբերությունը։

13. Ինչու Մեծ Ովկիանոսի ցամաքներից հեռու գտնվող կղզիների մեծամասնության վրա առաջացել են տեղական տեսակներ։

14. Ի՞նչպես կապացուցեք, վոր ջայլամի նախորդները կարողացել են թռչել։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

Թեմա. — փոփոխականության յեվ ժառանգականության ուսումնիր (4 ժամ)

Նպատակադրումը.—Այս առաջադրությունն ունի խոշոր նշանակություն, վորովհետև սա հանդիսանում է եվոլյուցիայի հիմնական ֆակտորների՝ փոփոխականության և ժառանգականության պարզաբանման կարևոր փուլը։ Միևնույն ժամանակ այս իսկ առաջադրության միջոցով պարզվում է փոփոխականության և ժառանգականության ուսմունքի՝ գենետիկայի կապը ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության սոցիալիստական պրակտիկայի հետ։

Մշակման պլանը. — 1. Փոփոխականության տարբեր տեսակները։ Արտաքին ֆակտորների ազդեցությունն անհատական փոփոխականության վրա։ Վարիացիոն շարքեր։

2. Մուտացիոն փոփոխականություն և նրա նշանակությունն եվոլյուցիայի պրոցեսում և գյուղատնտեսական պրակտիկայում։ Ուղղության բացակայությունը մուտացիոն պրոցեսում։

3. Մենդելիզմ և քրոմոզոմային տեսություն։ Մենդելի փորձերը վոլոռների հետ։ Մենդելի որենքները։ Դաղափար Գամետների մասին։ Գամետների մաքրության հիպոթեզը։ Մոնո և դիհիբրիդային խաչաձևում։ Միջակա և դոմինանտ ժառանգում։ Ժառանգականության քրոմոզոմային տեսությունը։ Դաղափար սեռական քրոմոզոմների մասին։ Սեռի վորոշումը։

4. Մենդելի հայտնաբերած որենքների բացատրությունը քրոմոզոմային տեսության տեսակետից։

5. Ժառանգականության և փոփոխականության ժամանակակից գիտություն՝ գենետիկան։

Դաղափար մաքուր գծերի և բուսաբուծության ու կենդանաբուծության պրակտիկայում ունեցած նրանց նշանակության մասին։ Դաղափար գենոտիպի և ֆենոտիպի մասին։

6. Գենետիկան վորպես սելեկցիայի տեսական բազա։ Սելեկցիայի զարգացման լայն հնարավորությունները ԽՍՀՄ-ում՝ կապված գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետ։ Հիբրիդիզացիան և ընտրությունը վորպես գյուղատնտեսական բույսերի և կենդանիների նոր ձևեր առաջացնելու մեթոդներ։

7. Գենետիկայի և սելեկցիայի դերը եվոլյուցիոն պրոցեսի հիմնավորման խնդրում։

8. Ժառանգականությունը և փոփոխականությունը վորպես եվոլյուցիոն պրոցեսի հիմնական նախադրյալներ։

9. Յեվգենիկայի պրոբլեմը։ Պայքար ժառանգականության որենքների բուրժուական խեղաթյուրումների դեմ։ Դրանց անքննադատական տեղափոխումը յեվգենիկայի դրոշի տակ մարդու վրա։ Բուրժուական յեվգենիկան վորպես դասակարգային և ցեղային ճնշման զենք։

Գրականություն. — Բելյայեվ, «Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները», էջ 26—28 և 74—111։

Ինքնաստուգման հարցեր — 1. Մոդիֆիկացիոն փո-

փոխականութիւնն ինչով և տարբերվում մուտացիոն փոփոխականութիւնից։

2. Ի՞նչ տեսակների վրա հեշտ է դիտել կենդանիների հասակային փոփոխականութիւնը։

3. Ի՞նչպես է միջավայրն ազդում տարբեր տեսակի թիթեռների օրգանիզմի վրա և կարելի՞ է արդյոք սեզոնային փոփոխականութիւնը համարել մուտացիոն փոփոխականութիւն։

4. Կարելի՞ է արդյոք միմիայն արտաքին պայմանների ազդեցութիւնամբ (սնունդ, լույս, բարեխառնութիւն և այլն) առաջացնել կենդանու կամ բույսի մի նոր տեսակ. ինչու։

5. Ի՞նչ բան է «վարիացիոն շարքեր», օրինակ՝ վորևէ զտարյուն թռչունի ածանութիւնն նկատմամբ։ Այդ ձուածանութիւնն վո՞ր առտիճանն է ընդունակ ժառանգաբար փոխանցվելու։

6. Ընտանի կենդանիների և գյուղատնտեսական բույսերի նոր առաջացած մուտացիաներն արդյոք միշտ էլ օգտակա՞ր են լինում մարդու համար։ Արդյոք արտաքին միջավայրն ազդում է մուտացիայի վրա և ի՞նչպես ապացուցել այդ։

7. Մարդու ընտրած և ժառանգորեն վաղորոք հաստատված վորևէ մաքուր տեսակի բույսի մեջ կարող են արդյոք մուտացիաներ առաջանալ։

8. «Գիշերային գեղեցկուհու» հիբրիդային (առաջին) սերունդն ինչով կտարբերվի հաջորդ սերնդից։

9. Դամեռն ինչով է տարբերվում զիգոտայից։ Մաքուր տեսակի վո՞ր ձևն ավելի հեշտ է ստանալ՝ դոմինանտ, թե՞ ռեցեսիվ և ի՞նչպես այդ ապացուցել։

10. Ի՞նչպիսի խաչաձևման դեպքում՝ հիբրիդային թե՞ դիհիբրիդային, կարելի՞ է ավելի շատ նոր տեսակներ կամ ցեղեր ստանալ և ի՞նչպես ապացուցել այդ։

11. Վո՞ր դեպքում ավելի հեշտ է հայտարերել մաքուր դոմինանտ հատկանիշը՝ միջակա՞ թե դոմինանտ ժառանգականութիւն դեպքում և ինչու։

12. Հոմոզիգոտ ձևերն ինչով են տարբերվում հետերոզիգոտ ձևերից։

13. Վո՞ր քրոմոզոմներն են կոչվում սեռական քրոմոզոմներ։

14. Ինչով բացատրել, վոր բարձր կաթնատվութիւամբ աչքի ընկնող կովը վատ կերակրելիս և խնամելիս քիչ կաթ է տալիս։

15. Ի՞նչպես կարելի է արագորեն բարձրացնել կովերի կաթնատվութիւնը և հավերի ձուածանութիւնը։

16. Հնարավո՞ր է արդյոք միջտեսակային հիբրիդիզացիա և ի՞նչ օրինակներով կարելի է այդ ապացուցել։

17. Ինչով մեռխացումը տարբերվում է կենդանաբանական պրակտիկայում կիրառվող հիբրիդիզացիայից և առաջին յեղանակն ի՞նչ առավելութիւն ունի յերկրորդի նկատմամբ։

18. Ինչու՞ կենդանիների սելեկցիան ավելի է դժվար, քան բույսերի սելեկցիան։

Ցուցմունքներ մշակման վերաբերյալ.—Վորովհետև ծրագրի վերջին նյութը՝ յեվգենիկայի պրոբլեմը Բելյայեվի դասագրքում չի պարզաբանված, ուստի հեռակայողն իր կոնսուլտացիոն կայանում այդ հարցի առթիվ պետք է ստանա կոնսուլտացիա (1 ժամ)։ Վոչ պարտադիր գրականութիւնից կարող եք նշել Նատալի «Գենետիկա» գիրքը, Պետհրատ 1936 թ.։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՁՈՐՐՈՐԴ

Թեմա.—Եվոլյուցիոն գաղափարների զարգացումը բիոլոգիայի բնագավառում մինչև Դարվինը (2 ժամ)

Նպատակադրումը.—Այս առաջադրութիւնի նպատակն է տալ եվոլյուցիոն գաղափարների զարգացման տեսութիւնը մինչև Դարվինը. այստեղ ուսումնասիրվում են այն թեորիաները, վորոնք տիրապետող են յեղել 18-րդ և 19-րդ դարերում։ Լամարկի թեորիան ուսումնասիրելիս պիտի հատուկ ուշադրութիւն դարձնել նրա ուսմունքի վիտալիստական և մեխանիստական կողմերի վրա։

Մշակման պլանը.—1. Կենդանի բնութիւնի անփոփոխականութիւնի կրոնական պատկերացումների անդրադարձումը բիոլոգիայում։ Կարլ Լինեյը և նրա «Բնութիւնի սիստեմը»։

Կյուվիեն և նրա ուսմունքը կենդանիների կառուցվածքի չորս պլանի, տեսակների անփոփոխականութիւնի մասին և այլն։ Կյուվիեն և դ՝ Որբինիի կատաստրոֆների թեորիան, վոր քողարկում էր տերտերականութիւնը և աշխարհի ստեղծագործման տատվածային հավատը։

2. Ջ. Դարվինի նախորդները՝ Լամարկն ու Ժ. Ս.-Իլերը։

Լամարկի ուսմունքի հիմնական դրույթները։ Լամարկի ուսմունքի վիտալիստական և մեխանիստական կողմերը (ձգտում դեպի գրադացիա, ատացական հատկանիշների ժառանգելը)։

3. Ժ. Ս.-Իլերի ուսմունքը։ Ժ. Ս.-Իլերի և Կյուվիեյի բանավեճն ու նրա հետևանքները։ Որգանական ձևերի եվոլյուցիոն միմիայն փոփոխականությամբ, թեկուզ և ժառանգական փոփոխականությամբ բացատրելու անհնարինությունը։

Գրականություն.—Բելյայեվ, «Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները», եջ 7—22։

Ինքնաստուգման հարցեր.—1. Ի՞նչ տեսակետ ունի Լիննեյը տեսակների ծագման վերաբերյալ։

2. Ինչո՞վ և պարտական բիոլոգիան Ժ. Կյուվիեյին։

3. Ի՞նչ տեսակետ ունի Ժ. Կյուվիեն տեսակների ծագման վերաբերյալ։

4. Ի՞նչպես և Կյուվիեն բացատրում անցողիկ ձևերի բացակայությունը, բրածո ֆաունայի իրար հաջորդող յերկրաբանական դարաշրջաններում։

5. Ի՞նչ թեորիա ստեղծեց Կյուվիեն և ինչպես հիմնավորեց այն։

6. Ի՞նչ լրացումներ կատարեցին Կյուվիեյի աշակերտները նրա կատաստրոֆների թեորիայի մեջ։

7. Կյուվիեյի կատաստրոֆների թեորիան ի՞նչ բախտի արժանացավ։

8. Ի՞նչպես եր Լամարկը նայում տեսակների անփոփոխականության գաղափարի վրա։

9. Վո՞ր ֆակտորն ըստ Լամարկի խիստ մեծ դեր եր խաղում տեսակների փոփոխականության պրոցեսում։

10. Ինչո՞ւմն և կայանում դրադացիայի սկզբունքն ըստ Լամարկի։

11. Վո՞ր ֆակտորն, ըստ Լամարկի, ազդելով որգանիզմի վրա, առաջացնում եր միայն նպատակահարմար փոփոխություններ։

12. Ինչու՞ Լամարկի հայացքը, վոր որգանիզմները կարող են միայն ոգտակար փոփոխություններ կրել, սխալ է և վիտալիստական։

13. Ի՞նչպես են ըստ Լամարկի ազդում որգանիզմի վրա միջավայրի պայմանները և ի՞նչ որինաչափությունների յե բերում այդ ազդեցությունը։

14. Ի՞նչ են վկայում Լամարկի որենքները։ Նրա ուսմունքի վո՞ր մասը կարող է կոչվել վիտալիստական և վո՞ր մասը՝ մեխանիստական։

15. Ժ. Ս.-Իլերն ընդունում եր արդյոք Լամարկի դրադացիայի սկզբունքը։ Ժ. Ս.-Իլերի ուսմունքն ինչո՞վ է ժոտեռնում Լամարկի ուսմունքին և ինչո՞վ է նրանից տարբերվում։

16. Վո՞ւր է Ժ. Ս.-Իլերի և Ժ. Կյուվիեյի բանավեճի ղեղադապառնառը, յե՞րբ տեղի ունեցավ այդ բանավեճը և ի՞նչ հետևանքներ ունեցավ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թեմա.—Դարվինը յեվ նրա ուսմունքը (6 ժամ)

Նպատակադրումը.—Գենետիկայի և սելեկցիայի խնդիրների, ինչպես նաև Դարվինի նախորդների թեորիաների մշակումից հետո հեռակայողների առաջ խնդիր է դրվում հիմնովին ծանոթանալ Չ. Դարվինի ուսմունքի հիմնական դրույթների հետ։ Դարվինի ուսմունքը հիմք է ծառայել բիոլոգիայի և մասնավորապես եվոլյուցիոն տեսության հետագա զարգացման համար։

Մշակման պլանը.—1. Չ. Դարվինի կենսագրությունը։ Պատմական նախադրյալներ, վորոնցով պայմանավորված է Չ. Դարվինի աշխատանքների հանդես գալը։

Դարվինը վորպես անգլիական արդյունաբերական բուրժուազիայի իդեալոգիայի արտահայտիչ։

Դարվինի «Տեսակների ծագման» նշանակությունն Անգլիայի արդյունաբերական կապիտալիզմի ծաղկման շրջանում՝ եվոլյուցիոն գաղափարների զարգացման խնդրում։

2. Դարվինիզմի հիմունքները.—Դարվինի ուսմունքը տեսակի և փոփոխակի մասին։

Գյուղատնտեսական պրակտիկների մեթոդներն ու նվաճումները Դարվինի եպոխայում վորպես «Տեսակների ծագման» գլխավոր հենակետներից մեկը։ Արհեստական ընտրություն և

դրա նշանակությունը տեսակների ծագման պրոբլեմը լուծելու խնդրում։

3. Որգանիզմների բազմացման պրոգրեսիան (առաջատվությունը) և կենդանի էյ[illegible]ի մասսայական կորուստը։ Գոյության կռիվը և ամենից ավելի հարմարվածների կենդանի մնալը։ Գոյության կռվի զանազան ձևերը և բնական ընտրությունը։

Փոփոխականությունը և ժառանգականությունը վորպես բնական ընտրության ուղիով ընթացող եվոլյուցիայի հիմնական ֆակտորներ։

4. Արհեստական ընտրության էական տարբերությունը բնական ընտրությունից։ Արհեստական ընտրությունը և ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի ծագումը։

5. Հատկանիշների խոտորման սկզբունքներն ըստ Դարվինի։ Միջակա ձևերի վոչնչացման անխուսափելիությունը։

6. Արյունակցական ազգակցությունն որգանիզմների միջև պատմական զարգացման պրոցեսում համաձայն Դարվինի տեսության։ Եվոլյուցիան և հարմարվելու յերևույթը։ Հարմարվելու գաղափարը բիոլոգիայում։ Գոյության տարբեր պայմաններին որգանիզմների տիպական հարմարումների որինակներ։

Սիմբիոզի յերևույթը և պարազիտիզմը, միմիկրիայի և հովանավորող գույնի ու ձևի յերևույթները։

7. Որգանիզմների կառուցվածքի այսպես կոչված «նպատակահարմարության» հարաբերական բնույթը։ «Նպատակահարմարության» մատերիալիստական բացատրությունը վորպես ուժեղագույն փաստարկում ընդդեմ նրա կրոնական-մետաֆիզիկական մեկնաբանման և կենդանի բնության մասին յեղած վիտալիստական հայացքների։

8. Դարվինիզմի բուրժուական սահմանափակությունը և Դարվինի ուսմունքի մետաֆիզիկական մոմենտների քննադատումը (գոյության կռիվը վորպես բնության ընդհանուր որենք) Մարքսի և Ենգելսի կողմից «թռիչքի» պրոբլեմը եվոլյուցիոն ուսմունքում և նրա բացակայությունը Դարվինի տեսության մեջ։ 9. Պայքար դարվինիզմի դեմ և նրա դասակարգային եյությունը, 19-րդ դ. 60—80 թ. թ. և ներկայումս բուրժուական յերկրներում։ Դարվինիզմի ոգտագործումը բուրժուական դիտության

կողմից դասակարգային, ցեղային և ազգային ճնշումները հիմնավորելու համար։

10. Սոցիալական դարվինիզմը և նրա դասակարգային եյությունը։ Որգանական աշխարհի եվոլյուցիայի դարվինյան որենքները սոցիալական յերևույթների վրա տարածելու հետադիմականությունը։ Մարքսիզմը դարվինիզմին նույնացնելու սահմանման անթույլատրելիությունը։

11. Մարքսը, Ենգելսն ու Լենինը դարվինիզմի մասին։ Լենինն ամբողջ գոյություն ունեցողի զարգացման մեխանիստական և դիալեկտիկա-մատերիալիստական ըմբռման մասին։ Ընդհատության (թռիչքների) և անընդհատության պրոբլեմը եվոլյուցիայում Չ. Դարվինի դիալեկտիկայի տարբերությունը։

Գրականություն.—1. Բելյայեվ «Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները», եջ 23—49, 70—72 և 152—157։

2. Տիմիրյազեվ Կ. Ա. «Դարվինը և նրա ուսմունքը» 1—5 գլուխներ։

Ինքնատուգման հարցեր.—1. Ինչ սոցիալ-տնտեսական նախադրյալներ հանդես բերեց Չ. Դարվինի ուսմունքը։

2. Չ. Դարվինի շուրջերկրյա ճանապարհորդությանը հետևելով քարտեզի վրա, նշեցեք, թե ճանապարհորդության ժամանակ Դարվինի ուսումնասիրած և եվոլյուցիայի գաղափարը հաստատող վոր փաստերն ստիպեցին նրան զբաղվել տեսակների ծագման խնդրով։

3. Դարվինն ինչպես եր բացատրում տեսակի և փոփոխակի միջև յեղած սահմանի բացակայությունը։

4. Ի՞նչում է կայանում արհեստական ընտրության եյությունը։ բերեք որինակներ։

5. Ի՞նչ նախադրյալներ է առաջադրում Չ. Դարվինը բնության մեջ բնական ընտրության գոյությունը հաստատելու համար։

6. Ինչի՞ հետևանք է, ըստ Դարվինի, բնական ընտրությունը։

7. Բերեք կենդանիների մեջ յեղած գոյության կռվի զանազան ձևերի որինակներ և նշեցեք, թե պայքարի վոր ձևն ամենից ավելի ինտենսիվ բնույթ ունի։

8. Բնական ընտրությունն ինչո՞վ է տարբերվում արհեստական ընտրությունից։

9. Ի՞նչպես պիտի հասկանալ ամենից ավելի հարմարված-ների կենդանի մնալը։

10. Բացատրեցեք, թե ինչպես կարող են առաջ գալ, նախ՝ նոր փոփոխակներ և ապա նոր տեսակներ։

11. Կարո՞ղ է արդյոք հարմարումը միշտ էլ լինել նպատակահարմար, թե՞ նա կրում է միայն հարաբերական նպատակահարմար բնույթ։

12. Ի՞նչպես է Դարվինը բացատրում միջակա ձևերի անհետացումը և ինչու բրածոների մեջ հանդիպող ձևերը բացառիկ կարևոր նշանակություն ունեն էվոլյուցիայի պարզաբանման համար։

13. Ինչո՞ւ էվոլյուցիայի բոլոր յերեք ֆակտորներն էլ (փոփոխականությունը, ժառանգականությունը և բնական ընտրությունը) Դարվինի տեսության մեջ ներդործում են միաժամանակ և միմյանց հետ սերտորեն կապված։ Մի վորև է որինակի միջոցով ցույց տվեք թե այդ յերեք ֆակտորներից և վոչ մեկը չի կարող բացառվել։

14. Ի՞նչ փաստեր կարող եք բերել բնական ընտրության գոյությունը հաստատելու համար։

15. Ի՞նչպես կարող եյին բնության մեջ առաջանալ անթև միջատը, ուտելի գունավոր մրգերը, մեղվանման ճանճը։

16. Ինչո՞ւ սխալ է բնական ընտրության կենսաբանական որենքը մարդկային հասարակության վրա տարածելը, ինչպես այդ անում եր Դարվինը։

17. Ի՞նչ հետևանքների յե հասցնում տարբեր, բայց ազգակից կենդանիների բիոլոգիական կամ աշխարհագրական մեկուսացումը բնության մեջ. բերեք որինակներ։

18. Ինչու հատկանիշների խոտորման սկզբունքը կարող է պարզաբանել վոչ միայն նոր տեսակների ու փոփոխակների, այլև ուրիշ. ավելի խոշոր տակսոնոմիկ միավորների (ցեղ, ընտանիք և այլն) գոյացումը։

19. Ինչումն են կայանում բուրժուական սոցիալ-դարվինիստների գլխավոր սխալները, ինչու այդ սխալները կրում են սուր կերպով արտահայտված հետադիմական բնույթ։

20. Ինչումն է կայանում Ջ. Դարվինի և Լամարկի ուսմունքների հիմնական տարամիտումը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս առաջադրությունից մանավանդ ծրագրի այն մասում, վորը կապված է սոցիալ-դարվինիզմի և էվոլյուցիայի ընդհատության (թռիչքների) և անընդհատության պրոբլեմի հետ, անհրաժեշտ է կոնսուլտացիայանում ստանալ 2 ժամ կոնսուլտացիա։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

թեման—էվոլյուցիոն ուսմունքի զարգացումը Դարվինից հետո (2 ժամ)

Նպատակադրումը.—Այս առաջադրության միջոցով հեռակայողը ծանոթանում է նեոլամարկիզմի և նեոդարվինիզմի արդի ուսմունքների հետ, ավելի խորն է ուսումնասիրում, ստացական (ձեռքբերովի) հատկանիշների ժառանգելու և «ներքին զգացմունքների» դերի լամարկիստական դրույթների հետ։ Այս նույն առաջադրության միջոցով մշակվում է այսպես կոչված տեսական մոդիֆիկացիաների և մուտացիաների նշանակությանը վերաբերող նյութը, վորն այսքան խոշոր նշանակություն ունի մարքսլենինյան մեթոդոլոգիան մշակելու տեսակետից։

Մշակման պլանը.—1. Արդի նեոլամարկիզմն ու նեոդարվինիզմը։ Նեոդարվինիստների ուսմունքի իդեալիստական մոմենտները։ Փոփոխականության և հարմարման խնդիրներին վերաբերող մետաֆիզիկական և իդեալիստական թեորիաների քննադատական վերլուծումը։

2. Ստացական հատկանիշների ժառանգման խնդրի լամարկիստական սահմանման սխալականությունը վորոշ զոոտեխնիկների մոտ։ Բուսաբուծության և կենդանաբուծության սոցիալիստական վերակառուցումն արգելակող արդի լամարկիզմի և ավտոդենեզի քննադատությունը։

3. Տեսական մոդիֆիկացիաների յերևույթը և նրանց ճիշտ պարզաբանումը։

4. Մուտացիաները բնության մեջ և նրանց որինաչափությունները։ Մուտացիաների արհեստականորեն ստանալը և նրանց նշանակությունը բուսաբուծության և կենդանաբուծության պրակտիկայում։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

Գրականություն.—1. Բելյայեվ, «Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները», եջ 72—73, 76—78 և 98—101։

2. Նատալի «Գենետիկա»։

Ինքնաստուգման հարցեր.—1. Արդի նեոդարվինիզմն ինչով է տարբերվում Դարվինի կլասիկ ուսմունքից։

2. Արդի նեոլամարկիզմն ինչով է տարբերվում Լամարկի ուսմունքից։

3. Ի՞նչ սխալներ են անում մեխանոլամարկիստներն ստացական հատկանիշների ժառանգման խնդիրներում։

4. Տեսական մոդիֆիկացիաները կարող են արդյոք նոր տեսակներ առաջացնել և, եթե վոչ, ինչով է դա բացատրվում։

5. Տեսական մոդիֆիկացիաներն ինչով են տարբերվում մուտացիաներից։ Ինչպես են արհեստական մուտացիաներ ստանում։ Ի՞նչ նշանակություն ունեն մուտացիանները բուսաբուծության և կենդանաբուծության պրակտիկայում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վորովհետև Բելյայեվի գրքում այս թեմային վերաբերող նյութն անբավարար է, ուստի հեռակայողն այս առաջադրությունից պիտի ստանա 2 ժամ կոնսուլտացիա։

№ 1 Կոնտրոլ աշխատանք (2 ժամ)

Պատասխանեցեք հետևյալ հարցերին։

1. Բնության մեջ ինչպես է կատարվում բնական ընտրությունը։

2. Ի՞նչ սխալ յեզրակացությունների յե բերում դարվինիզմի կիրառումը սոցիոլոգիայում և ինչպես է այդ ոգտագործվում բուրժուազիայի կողմից։

3. Ի՞նչպես ապացուցել, վոր բիոգենետիկ օրենքը, ռուդիմենտար և հոմոլոգ օրգանները հերքում են կենդան եյակների ստեղծագործման կրոնական առասպելը։

4. Համառոտագրեք Դարվինի և Լամարկի ուսմունքների հիմնական գրույթները և նշեցեք նրանց տարբերության գլխավոր գծերը։

5. Սև և հարթ մաղերով խոզուկներին նշանակելով ՍՀ. և սպիտակ ու գանգրահերներին՝ ՍԳ. Գ. տառերով, զուգավորեցեք սև և հարթամազ արուին սպիտակ և գանգրահեր եգի հետ—ստացված սև գանգրահեր հիբրիդներից ստացեք 2-րդ սերունդը և խոզուկների նոր ստացված բոլոր ձևերը նշանակեցեք համապատասխան տառերով։

Պատասխանեցեք, թե քանի՞ հատ և ինչպիսի խոզուկներ են ստացվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս բոլոր հարցերը հեռակայողը պիտի մշակի, հիմնվելով անցած դասընթացի վրա, առանց լրացուցիչ գրականության։ Վերջին պատասխանն ավելի պարզ դարձնելու համար զուգավորման ամբողջ սխեման նշանակեցեք տառերով։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Թեմա.—Մարդու ծագումը (3 ժամ)

Նպատակադրումը.—Մարդու ծագման հարցն եվոլյուցիոն ուսմունքի ամբողջ դասընթացի ամենակարևոր խնդիրն և հանդիսանում։ Այստեղ ավելի, քան մյուս հարցերում, բաղխվում ենք հետադիմական հայացքների աղավաղումների հետ։

Դրա կապակցությամբ խիստ կարևոր է դրսևորել որգանական աշխարհի և մարդկային հասարակության եվոլյուցիայի օրենքների տարբերությունը։

Մշակման պլանը.—1. Մարդու կենդանական ծագման ապացույցները՝ համեմատական անատոմիական (ռուդիմենտարիզմ, ատավիզմ), ֆիզիոլոգիական (արյան) և սաղմնաբանական։

2. Մարդու ծագումը վորպես սոցիալական պրոբլեմ։ Որգանական աշխարհի բիոլոգիական եվոլյուցիայի օրենքների և մարդկային հասարակության եվոլյուցիայի սոցիալական օրենքների վորակական տարբերությունը։

3. Մարդու և մարդանման կապիկների նմանությունն ու վորակական տարբերությունը։

4. Աշխատանքի միջոցով կատարելագործված մարդու ձեռքի և մարդանման կապիկների զարգացած ձեռքի միջև յեղած վորակական տարբերությունը։ Վերին վերջավորությունների աղատվելը (վորպես հետևանք ուղղահայաց դիրքի անցնելուն) հնարավորություն տվեց մարդու նախահայրերին արտադրել գործիքներ։

5. Մարդու խոսելն ու դատելը, դրանց եվոլյուցիոն աշխատանքի պրոցեսում դիալեկտիկա-մատերիալիստական տեսակետից։ Ձեռքի հետ միասին և մասամբ նրա շնորհիվ զարգացավ նաև մարդու ուղեղը։

6. Բրածո մարդը և նրա ու ժամանակակից մարդու հարաբերությունը։ Պիտեկանտրոպ-Սինանտրոպ, վորպես մարդկայնացման հետագա աստիճան։ Հեյդելբերգյան ցեղը։

Նեանդերթալյան ցեղը, նեանդերթալցիների տեխնիկան՝ կրակով ոգտվելու կարողությունը և մորթիների գործածությունը։ Կրոմանիոնի ցեղը վորպես ժամանակակից մարդու բրածո ձև։ Կրոմանիոնցիների զարգացման բարձրությունը, համեմատած նախորդ ցեղերի հետ։

7. Մարդու ծննդավայրի խնդիրը և նրա ֆիլոգենիայի վիճելի մոմենտները։ Մարդու ծագման բազմացեղային (պոլիֆիլետիկ) պատկերացումների ոգտագործումը կրոնական-դասակարգային և հակակոսմոպոլիտական նպատակների համար։

8. Դարվինի տեսակետը մարդու ծագման վերաբերյալ իդեալիստական աշխարհայացքի անդրադարձումը նրա հայացքներում և աշխատանքի դերի անտեսումը։

9. Բուրժուազիայի և յեկեղեցու պայքարը մարդու ծագման հարցի գիտական պարզաբանման դեմ։

Գրականություն.—1. Բելյայեվ «Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները», էջ 112—158։

2. Ենգելս, «Աշխատանքի դերը կապկի մարդկայնացման պրոցեսում»։

Ինքնաստուգման հարցեր.—1. Ի՞նչ ավյալների վրա հիմնվելով կարելի յե խոսել մարդու կենդանական ծագման մասին։

2. Ինչու՞ չի կարելի մարդուն առաջացնել ներկայումս ապրող մարդանման կապիկների վորևե մեկից։

3. Մարդանման կապիկներից վո՞րն է անատոմիապես և ֆիզիոլոգիապես ավելի մոտ մարդուն և ինչպես կարելի յե ապացուցել այդ։

4. Ի՞նչ հաջորդականությամբ և ընթացել մարդու էվոլյուցիան, յեթե հիմնվելու լինենք անհետացած մարդկային ցեղերի բրածո մնացորդների վրա։

5. Ի՞նչպես է ըստ Ենգելսի տեղի ունեցել կապկի մարդկայնացումը։

6. Ի՞նչպես և ազդել աշխատանքը մարդու նախնիքների հնչյունարտաժան խոսքերի (հոդորոշ հնչյունների) զարգացման վրա։

7. Ի՞նչպես էր նայում Դարվինը մարդու ծագման վրա։ Ինչու՞մն էր նա սխալվում։

8. Բուրժուական գիտությունն ինչպես և բացատրում մարդու ծագումը։ Ինչու՞ մարդկային ցեղի ծագման տարբեր արմատների թեորիան, ինչպես և այդ ցեղերը բարձրի ու ցածրի բաժանելն այդքան հետևությամբ ընդունվեց և պաշտպանվեց բուրժուական յերկրներում։

9) Ի՞նչպես կարելի յե ապացուցել մարդու միացեղ (մոնոֆիլետիկ) ծագումը։

10) Վորո՞նք են հին մարդանման կապիկների մարդկայնացման պատճառները։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Թեմա.—Կյանքի ծագումը (2 ժամ)

Նպատակադրումը.— Ամփոփելով Եվոլյուցիոն ուսմունքը, կանգ ենք առնում խիստ կարևոր մի խնդրի վրա, այն է՝ ինչպես և առաջացել կյանքը յերկրի վրա։ Այդ խնդիրը կարելի յե լուծել միմիայն գիտական մեթոդով։

Հեռակայողն այստեղ նորից բաղվելու յե վիտալիստական և մեխանիստական թեորիաների և, զրանց հետ միասին, բուրժուական գիտնականների առաջ դրված զրույթների քննադատման հետ։

Այս առաջադրությունը մշակելիս հեռակայողը պիտի պարզի, վոր կյանքն անորգանական մատերիայի զարգացման բնապատմական պրոցեսի արդյունքն է, և զրանով իսկ ուժեղ հարված հասցնի վիտալիստների այն հավատարիացումներին, վոր իբր թե կյանքի պրոցեսներին միջամտում են ինչ-վոր անհայտ, անիմանալի, գերբնական ուժեր։

Մշակման պլանը.—1. Կյանքի ծագման խնդիրը վորպես Եվոլյուցիոն ուսմունքի կարևորագույն թեմաներից մեկը և նրա հակակրոնական նշանակությունը։

2. Հարցի զրման պատմության համառոտ տեսությունը։

ա) Պանսպերմի հիպոթեզը, նրա վիտալիստական եությունը և սնանկությունը։ Կենդան և անկենդան նյութի մեջ անջրպետ ստեղծելու ձգտումը վորպես տերտերականության պաշտպանություն գիտության մեջ։

բ) Կյանքի ծագման մեխանիստական հիպոթեզներ։

գ) Կյանքի ծագումը դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից։

3. Ինքնագոյացման հայացքների զարգացման պատմությունը։ Լուի Պաստյորի փորձերը և նրանց նշանակությունը։ Պաստյորի փորձերի լայն մեկնաբանման անթույլատրելիությունը։ Ինքնագոյացման թեորիայի հիմնական դրույթները դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից։ Կյանքի ուրույն լինելը։

4. Պարզագույն օրգանիզմների հանդես գալը վորպես մատերիայի էվոլյուցիայի նոր վորակի գոյացում։ Նախնական օրգանիզմների մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական բնության ուրույնությունը։

5. Արդի օրգանիզմները վորպես օրգանական ձևերի տեսական պատմական զարգացման պրոցեսի հետևանք։

Նախնական օրգանիզմները ժամանակակից պրոտիստների հետ նույնացնելու անհնարությունը։

6. Կյանքի ծագման հարցի վիտալիստական և մեխանիստական դրվածքի դեմ պայքարելու անհրաժեշտությունը։

Կյանքը մատերիայի պատմական զարգացման, նրա նոր վորակի արդյունքն է։

Գրականություն.—Բելյայեվ «Էվոլյուցիոն ուսմունքի հիմունքները», էջ 159—173։

Ինքնաստուգման հարցեր.—1. Կյանքի ինքնագոյացման գաղափարի վրա ի՞նչպես էին նայում հին դիտնականներն ու փիլիսոփաները և ինչու՞ նրանց հայացքները համակված էին «արարչի իմաստությունն» ապացուցելու կրոնական ձգտումով։

2. Ինչո՞վ բացատրել, վոր 16 և 17-րդ դարերում ինքնագոյացման գաղափարին այլևս հավատ չէին ընծայում, այլ ստուգում էին փորձերով։

Ինքն իսկ՝ կյանքի ինքնագոյացման գաղափարն այդ ժամանակ ի՞նչպիսի էվոլյուցիա կրեց։

3. Ինքնագոյացման հնարավորության վրա ինչպես էին նայում 18-րդ դարի մատերիալիստները և ի՞նչպես էին վճռում այդ հարցը 19-րդ դ. դիտնականները։

4. Ի՞նչպիսի փորձեր դրեց Լուի Պաստյորը և ի՞նչ գիտական ու պրակտիկ նշանակություն ունեցան դրանք։

5. Ինչու՞ Պաստյորի փորձերը չի կարելի լայնորեն մեկնաբանել։

6. Ի՞նչ թեորիաներ առաջադրեցին վիտալիստները և ինչու՞մն է կայանում դրանց սահմանման եությունը։ Ինչու՞ այդ թեորիաները չի կարելի էվոլյուցիոն համարել։

7. Ինքնագոյացման թեորիաների հիմնական դրույթներն ինչպիսի դրույթներ են դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից։ Ի՞նչպես ենք հասկանում կյանքի ուրույն լինելը։ Ինչու՞ օրգանիզմները և անկենդան բնության մարմինները տարբեր օրենքներով են դեկավարվում։ Վո՞ր կենսական պրոցեսը յուրաքանչյուր օրգանիզմի միանգամայն անհրաժեշտ պայմանն է հանդիսանում։

8. Առանց ինչի՞ անհնարին է նյութերի փոխանակությունն օրգանիզմում։

9. Ինչու՞ արդի պայմաններում անհնարին է կենդան եյակների ինքնագոյացումը։ Դարվինի՞ հետևողներից ով առաջինը պնդեց կյանքի նախնական ծագման հնարավորությունն անկենդան բնությունից։

10. Վո՞ր ռուս քիմիկոսն ստացավ պարզագույն սպիտակուցին մոտ գտնվող նյութը։ Կյանքի ծագման պրոբլեմի տեսակետից ի՞նչպես գնահատել այնպիսի մի նվաճում, ինչպիսին է Ֆիշերի և մյուսների կողմից պոլիպեպտիդների ստացումը։

11. Ինչու՞ կենսական պրոցեսների ուրույնության բացատրումը ժամանակակից մեխանիստների կողմից անհամեմատ ավելի է վտանգավոր ու ֆաշիստական, քան վիտալիստների, կենսուժի, հոգու և այլն վերացական հասկացողությունների բացարձակ ընդունումը։

12. Ինչու՞մն է կայանում ամեն յերանգի մեխանիստների ու վիտալիստների թեորիաների դասակարգային եությունը և ինչու՞ ժամանակակից քիմիկոսների աշխատանքները կենդանի «սպիտակուց» ստանալու պրոբլեմի վերաբերյալ դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից պիտի առանձնապես կարևոր համարվեն կյանքի եության ու ծագման խնդրում։

13. Մի՞թե միայն սպիտակուցն է կյանքի կրողը հանդիսանում։ Կենսական պրոցեսներում ինչպիսի դեր են խաղում այնպիսի օրգանական նյութեր, ինչպիսիքն են՝ ֆերմենտները, վիտամինները, լիպոյիդները և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վերոհիշեալ աշխարհայացք մշակելու տեսակետից կյանքի ծագման պրոբլեմը հույժ կարևոր նշանակություն ունի, ուստի հեռակայողներին առաջարկվում է այդ թեմայից 2 ժամ կոնսուլտացիա ստանալ։

№ 2. Կենսրոլ աշխատանք

1. Կոտանանք արդյոք մենք կյանք, կենդանի օրգանիզմ, յեթե քիմիորեն համալրենք սպիտակուցը։ Այդ սպիտակուցն ինչով կտարբերվի կենդան օրգանիզմից։

2. Ինչու Լ. Պաստյորի փորձերի արդյունքը վերջ վիտալիստների նոր առիթ տվեց բացատրելու կյանքի ծագումը յերկրի վրա ոչ թե եվոլյուցիոն ճանապարհով, անկենդան բնությունից, այլ տիեզերական տարածությունից սաղմեր ընկնելու միջոցով։

3. Ժամանակակից մարդու վոր բրածո նախահայրերի դյուտերը կարելի յե մարդու եվոլյուցիոն զարգացման հաջորդական շարքը դասել։ Այդ նախահայրերի մոտ ինչպես եյին փոփոխվում գանգը, ստորին ծնոտը, վոտքերի դիրքը՝ կանգնելու դեպքում, գործիքներ պատրաստելու ընդունակությունը և այլն։

Ի՞նչպես եք հասկանում Ենգելսի «Աշխատանքն ստեղծեց մարդուն» դարձվածքը։

Ուսումնական սեսիան

Ամբողջ ուսումնական սեսիային հատկացվում է 16 ժամ, վորի ընթացքում կարդացվելու յե յոթ դասախոսություն և, հնարավորության սահմաններում, կազմակերպվելու յե երկու եքսկուրսիա (4 ժամ) դեպի բիոթանգարան և «Մարդու ծագմանը» նվիրված ցուցահանդես։

Առաջին պարապմունք.— Եվոլյուցիոն ուսմունքի դասընթացի ներածությունը և զարգացումը եվոլյուցիայի մասին (1 ժամ)։

Յերկրորդ պարապմունք.—Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները։ Եվոլյուցիայի պարզաբանման մեթոդները (2 ժամ)։

Յերրորդ պարապմունք.—Փոփոխականության և ժառանգականության ուսմունքը (գենետիկա) (3 ժամ)։

Չորրորդ պարապմունք.—Եվոլյուցիոն գաղափարների զարգացումը մինչև Դարվինը։ Դարվինը և նրա ուսմունքը (2 դասախոսություն 4 ժամ)։

Հինգերորդ պարապմունք.—Եվոլյուցիոն ուսմունքի զարգացումը Դարվինից հետո. նեոլամարկիզմ և նեոդարվինիզմ. տեսական մոդիֆիկացիաներ և դե-Ֆրիզի մուտացիոն տեսությունը (2 ժամ)։

Վեցերորդ պարապմունք.— Մարդու ծագումը (2 ժ.) 1-ին եքսկուրսիան դեպի բիոթանգարան «Եվոլյուցիայի ապացույցները և եվոլյուցիայի ֆակտորները» թեմայի շուրջը (պայմանական)։

2-րդ եքսկուրսիան դեպի մարդաբանական թանգարան «Մարդու ծագումը» թեմայի շուրջը (պայմանական)։

Յոթերորդ պարապմունք.—Կյանքի ծագումը և նրա եյութհունը (2 ժամ)։

-20

ՀՀ Ազգային գրադարան
NL0928197

26 МАР 1951

148

ԳԻՆԸ 60 Կ

II
28752